9.19

19

# ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Քրիստոնէական պարտաւորութեան հպատակաց Ամենաբարեպաշտ Կայսերութեան Ռուսաց։

281.6
Հ 29

1826. — ՌՄՀԵ.

Ի ՏՓԽԻՍ.

Ի ԳՈՐԾԱՐԱՆԻ ԴՊՐՈՑԻ ՀԱՅՈՑ.

Պատուելի հասարակութ̃ ամենայն Հայոց հպատակաց Քրիստոսազօր բարերար Տէրութ̃ Ռուսաց բնակելոց ի̃ ամ̃ սահմանս Աստրախանու, Ելիզաւետօպօլոյ, Ղարաբաղու, Նուխուայ, Շամախւոյ, Բաքուայ, Դարբանդու 'ի Քաղաքս եւ 'ի Գիւղս՝ Հոգեւորականաց եւ Մարմնաւորականաց.

Քրիստոսաւանդ ողջունիւ ծանուցանեմ ձեզ այժմ եւ ըստ պարտաւորութ̃ իմոյ, զի քաջայայտ է ամենեցուն՝ կամ բազմաց մերազանց ամ̃ պատմութ̃ն նախնեաց մերոց եւ սիրելի հայրենեաց, եւ գիտէք առ հասարակ՝ թէ կորուստ ամ̃ ազգական արժանաւորութեանց մերոց՝ թագաւորութեանց, իշխանութեանց, եւ ամենայն մեծափառ փայլելութեանց՝ պատուոյ, ճոխութեանց, հարստութեանց, եւ բոլորապէս իսկ ընդհանուր հայրենեաց Հայոց՝ ուստի են մեզ յառաջացեալ, եւ այս ամենայն հասարակական ազգային տարաբախտութեանց մերոց որք են պատճառք. զի ամ̃ ազգն Հայոց 'ի քանի հարիւրաւոր ամաց հետէ զրկեալ յամ̃ հայրենի ժառանգութեանց իւրեանց, դառնին տարածեալք ընդ ծագս տիեզերաց՝ ոմանք 'ի գերութեան, եւ ոմանք 'ի պանդխտութեան, որոց պաշտպան կենաց մինչեւ ցայսօր ժամանակի՝ ճանաչի մի միայն առանձնական շնորհ մեծ ողորմութեանց եւ մարդասիրութեանց Տ̃ն առ նոսա, եւ նորօք առատաձեռնեալ նոցա յատկական ձիրք բնաւորութեանց նոցա եւ բանաւորութեանց՝ Տ̃ն եւ բանականաց ամենեցուն սիրելի հաւատարմութիւն անփոփոխելի կամօք եւ մշտնջենաւոր հարազատութ̃, եւ կենդանի հոգւով զգացումն զչար եւ զբարի իւրեանց առաւել քան զբազումս, եւ բանաւոր ընտրութ̃ արիանալն յամ̃ աշխատութիւնս եւ 'ի նեղութիւնս ի̃ յառաջելեալս վասն յուսացեալ բարեաց եւ յառաջանալն 'ի նոսին բազում համբերութեամբ.

Գիտէք նոյնպէս եւ զկամս կարող եւ բարձր ինքնակալութեան ամ̃ Ռուսաց. զի տարածեաց նա զհզօր բազուկ իւր 'ի վերայ աշխարհի մերում ոչ յաղագս օգտի տէրութեան իւրոյ, այլ մանաւանդ յաղագս օգտի հա-

սա

տարակութեան ժողովրդոց, և պաշտպանութեն մեր հա-
ւատոյ և եկեղեցւոյ Քրիստոսի, որոց խոկութեանցն զուք իսկ
ականատեսութեամբ ձեր գտանիք վկայք. զի գերութենք
բազմութեան քրիստոնէից, և հեղեղք արեանց ծերոց և
տղայոց նոցին, և հրդեհք սրբութեան Տաճարաց և ե-
կեղեցեաց Թիֆլիզոյ ողբերգէն և ձգեցին զգութ 'ի սիրտ
աստուածանման տիեզերասասան տէրութեն Ռուսաց, որ յայս
ելեալ աստուածասիրաբար և մարդասիրաբար տարածեաց զթևս
իւր և ապահովացոյց զմեզ բաւականութ չափ յամ այն-
պիսեաց մինչև ցայսօր ժամանակի.

Գիտէք և զայն որ չէ 'ի ծածուկ. զի դեսպան Ա-
մենողորմած Կայսերական Մեծութեան ամ Ռու-
սաց՝ հանդերձ գերարժան հաւաքաւոր պարգևօք առա-
քեալ այժմ առ տէրութիւնն Պարսից ընդ օրինի բարե-
կարգեալ տէրութեն, մինչդեռ աշխարհ ամ լի էր յա-
ռուլ թէ է այնպիսի մարդասիրութեց նա զմարդասիրութե
փոխարինեալ՝ լնուլ ունէին զերկիր և զամ դհպառակն
երկաքանչիւր տէրութեց մեծ խաղաղութ և կատարե-
լագոյն ապահովութեամբ, ահա անակնկալ յամենայն
սահմանաւոր բարեխօս մտաց՝ առայապակ սպառեալ, և
թողեալ զյաղթօղ զինուորութիւն սահմանակալ գնդաց
Ռուսաց, հարկանեն աւազակաբար զժողովուրդս Հայոց
զատելս 'ի միաբանութեան և յանհոգութեն իւրեանց.
և զերեն և կոտորեն զնոսին ուր և հասանեն տկար զօ-
րութիւնք Պարսից.

Այն է մեծապէս տէրութիւն Ռուսաց, և առա-
ւել յոյժ՝ քան որչափ էին յայնժամ, յորժամ 'ի ժա-
մանակի առաջին մի ապաքապետութեցն Պարսից ժո-
ղովրդեան և եկեղեցւոյ Քրիստոսի բարեհաճեցաւ ընկալնուլ
զնոսա 'ի ներքոյ յատկական խնամակալութեանց իւրոց.
և խոստացեալ զամ զօրութիւն հակառակորդաց՝ շրջա-
պատելոց շուրջ զամ նորա սահմանօք իւրովք, ընդար-
ձակեաց մեզ և ամենից հպատակելոց իւրոց զամենայն
զխաղաղութիւն և զանձկութիւն՝ որք զամ զկեանս մերոց
նախնեաց մաշեցին անհնարին տառապանօք.

Այն է և զինուորութիւնն Պարսից, որ զառն իսկ
քաղաքն Երևանու այլև այն առ տաճարեալ յայնժամ ընդ
Տփխիս՝ գերեաց զամենայն զբնակեալս 'ի նմին. այս

այժմ ոչ զօրէաք մերձիլ յառաջ մատչիլ՝ ի քաղաքս, կամ առ սահմանակալ ահաւոր գունդս զօրաց Ռուսաց, բազում ահիւ և դողութեամբ շրջեալ յեզերս սահմանաց յայնածաւալ Տէրութեան նոցին, մեծ արժանաւորութի ինքեանց համարին յանկարծակի ի խաւար գիշերոյ գօզօրէն անկանիլ ՚ի վր̃ գիւղօրէից գտեղոց յանզգուշութեանց իւրեանց և փախուցանել զանասունս նոցին. կմ̃ ուր ուրեմն ես ձեռնհաս լինիլ գերել զամենս և կամ սպանանել ։ Ո՛չ զի առաջին վասպարտուէր նոցա զտահզօրեղագոյն վրէժխնդիր մեծազօր ԿԱՅՍԵՐՈՒԹԻՒՆՆ Ռուսաց՝ յորժամ ոչ ընաւ պարտաւորէր մեզ կա̃ աշխարհի մերում տիրական պարտաւորութը̃, այժմ մինչ առաջի Այ̃ և առաջի ամ̃ աշխարհի պատասխանատու է ՚ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԻՒՆՆ վասն ամենեցուն մեր ամ̃ տէր և աւանդապահ ժողովրդեան եկեղեցւոյն Քի̃, զիա՞րդ ոչ առաւել ևս սաստկութը̃ պահանջեսցէ ՚ի Թշնամեաց մերոց և հատուսցէ նոցա վասն ամենայն վնասուց նոցին անհնարելի վրէժխնդրութ̃ վաղվաղակի ։

Ըստ ինքեան իսկ ապացուցական է, թէ մատն Այ̃ է գործաւորիր այսորիկ պատահմանց. այն զի ընթեռնումք զգրեալսն՝ ՚ի Մարգարէէն. Ես խստացուցի զսիրտ Փարաւոնի և զսիրտ ծառայից նր̃, զի չարչարեսցէ նշանս իմ ՚ի վերայ նոցա։ Ելից. Ժ. 1.

Իսկ այս յիշեցուցանելով ձեզ զայս ամ̃, ՚ի դէպ դայ ինձ աստանօր յիշեցուցանել և զմեծ բազմութի ամ̃ ազգի մերոյ եղելոյ է̃ տէրութէ̃ զանազան ազգաց. առաւել ևս Օսմանցւոց և Պարսից՝ թէ զիա՞րդ նոքա տարեալ ամ̃ վշտաց և նեղութեց է̃ առաջ նելոց ինքեանց, մինչև ցայսօր ժամանակի աւելի քան զա̃մ ինչ և քան զեկեալս իւրեանց իսկ նախադասեալ միշտ զպաշտպանութի ընաւորեալ հաւատարմութեան իւրեանց, կա̃ միայն հանապազ անբեկանելի իւիք ՚ի նմին. և նովաւ մեծացուցեալ զպարծանս ընդհանուր հաւատարմութե Հայոց, շահին ազգատոհմի իւրեանց զնմանս իւրաքանչիւր տէրութեանց.

Այսորիկ է̃ այսմ և զձերն՝ որ ոչ նուազ քան ըզհաստ վերապահեալ միշտ զհամանգամայն յառաջին

ձեր

ձեր ամենայն զօրութ͞բ և կարողութ͞բ մարմնոյ ձեր և հոգւոյ՝ յայտնեցայք զանձինս ձեր ծառայ բարւոյ և հաւատարիմ բարերարը Տէրութ͞ե մեծազօր ԻՆՔՆԱԿԱԼԻ և ԿԱՅՍԵՐ ամենայն Ռուսաց, որով և փառաւոր է մեր ամենեցուն ձեր յոյժ՝ շնորհակալութիւն ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱՈՂՈՐՄԱԾ. Պատրաստիւ լինելով մեր սադրդուելի հաւատարմութ͞ե ձերոց: Զայս Քրիստոնեական է քարոզն և բան սուրբ Աւետարանին մր. Որ հաւատարիմ է փոքուն՝ նա հաւատարիմ է. Մտթ. ԻԵ. 13. Ըստ այսմ ուրեմն և ես որ հայր ձեր եմ հոգւոյ և որ առաջնորդ սրբոյ եկեղեցւոյ և քարոզ ժողովրդեան, պարտ անձին համարիմ գրել առ ձեզ ամենեսին զնոյն և ասել. Յո՛ւշ լիցին ձեզ առաջնորդքն առաջինք. խօսեցարուք զանս յոքնաց մինչև յաղթել. Եբր. ԺԳ. 7. Յո՛ւշ լիցին ձեզ վճիռք Աւետարանին տն մերոյ Յիսուսի Քրիստոսի վճռ Թէ շնորհեաց Թագաւորին. Մատթ. ԺԲ. 27. Տուայք զկայսերն Կայսեր, և զԱստուծոյն Աստուծոյ, եւ ինչ ասէ Աստուածն եմ. Յո՛ւշ լիցին ձեզ քաջութիւնք և երևելի երևելի առաքինութիւնք հարցն ձերոց՝ որոց դուք գտանիք որդիք և ժառանգաւորք արեան. Որպէս հարցն ձերոց և նախնեաց, նոյնպէս և ձեզ ամենեցուն ընտրելագոյն եղիցի նախապատուել զհաւատարմութիւն՝ որպէս առ Աստուած և առ սր հաւատն քրիստոնէութե, նոյնպէս և առ բարերարն մեր Աստուածապսակեալ ԿԱՅՍՐՆ ամ Ռուսաց՝ առաւել քան ըզ կեանս ձեր և քան զամենայն ինչ. քանզի ապահովութիւն բնական հաւատարմութեանց առ սակաւ մի է, և երբեմն և ոչ իսկ բնաւ մի զօրէ ապահովացուցանել. այլ առաւելապատիկ ապահովութի և օգուտ վկայեալ հաւատարմութեց՝ մշտնջենաւոր է, և անցանէ յազգաց մինչև յազգս որպէս և բազում են օրինակք, և մեք իսկ փորձառու եմք անձամբ անձին ողջոյն ազգովին՝ որով և ը ամ իշխանութիս իւրաքանչիւր տէրութեանց աշխարհիս գտանիմք ապահովացեալ ը իւրաքանչիւր չափու: Մի՛ զարհուրեցուցեն զձեզ ձայնք և աղաղակք Պարսից. զի ամ զօրութիք նոցա գտանին միայն ՚ի ձայնս իւրեանց և ՚ի բոհմունս մեծամեծս. և ոչ ՚ի զօրութի քաջէ և իմաստից իւրեանց. Այլ մեք ձայնք

նո

Նոցա են հնչմունք օդոց բարձրացեալք ՚ի հիւսիւսոյ. Նոյնպէս և ամ գոռումն նոցա և սպառնալիք վաղանցուկ են յոյժ. Քաջացարուք ուրեմն և մի զանգիտեցէք ընաւ. զի ասպատակութք ոչ զօրեն սարսեցուցանել նոքա զանպարտելի զօրութին աշխարհակալի և մեծ ԿԱՅՍԵՐ ամ Ռուսաց։ Երուք հաստատուն ՚ի հաւատարմութ ձերում և ամ իմաստութեամբ ջանասջիք զյիշատակ յաւիտենական վասն ձեր և վասն ձերոց ժառանգորդաց և ամ ազգի հայրենեաց փառաւոր եւս հանդիսացուցանել. Այս է տուեալ եղբօր զոր ղեկա-րեան բաղում. ասէ Իմաստուն Արքայն Սողոմոն. Առակ. ԻԲ. 1. Եւ Յուդա Մակաբէ քաջողէր ազգին իւրում խորոյսելի պաշարեցելոյ ՚ի գոռոզ թշնամեաց իւրեանց. Մեռցուք քաջութեամբ ՚ի վերայ եղբարց մերոց. և ոչ թողցուք զանուն փառաւորեան մերոյ ընդ քաջութեան. Ա. Մակ. Թ. 10. Որոյ և ես այժմ ձեզ ասեմ սիրելի ժողովրդեան Հայոց՝ հպատակաց Ամենաբարեպաշտ ԿԱՅՍԵՐՈՒԹԵԱՆ ամ Ռուսաց. այժմ է ահա ժամանակ՝ յորում դուք ամենեքին զնմանութի նախնեացն ձերոց քաջաց յանձին բերեալ, միաբան առհասարակ զնոյն բարբառ բարձրացուցեալ առ միմեանս, ձայն տուջիք միմեանց մեծամեծք և փոքունք. Քաջութեամբ մեռցուք առանց բեկանելոյ զհաւատարմութիւն հայրենի ազգի, զի զանուն և զբարի համբաւ հաւատարմաց ժառանգեսցուք՝ զմերոց նախնեաց. Եւ հաւատարիմ լիցեն բանք իմ այսօրիկ ձեզ ամենեցուն, զի ձեռն Աստուծոյ է բարձրացեալ ՚ի վր թշնամեաց ձերոց. Ապա թէ ոչ, զիա՞րդ կարելի լինէր յուսալ երբեմն, թէ այսպէս ինքնակամ ունիցին նոքա զարթուցանել ՚ի վերայ անձանց իւրեանց զբազում սուր անպարտելի Տէրութեան ամենայն Ռուսաց։ Իսկ սոցա օրական արշաւանք նոցա և աւազակութիք և զանազան հնարաւք ստութեանց հալածեցելոց ՚ի Պարսից կամ ՚ի նոցունց խաբեցելոց՝ տարածելոց յականջս հասարակութեանց՝ մի տարակուսեցուցեն զձեզ, զի միայն տկարացուցանել զմիտս ձեր կամին զձերոց և կամ զհաւատս և զձեռս. քանզի գրեալ իսկ է. Որ ձեռն փոքր է ՚ի հազարաց, Եսեաւորք է. Առակ. ԺԲ. 5.

Պարս–

Պարսկական հնարք քաջարուեստ յօրինուածովք սուտ համբաւոց՝ չեն ձեզ անծանօթ. այսպէս ամբարձուցեալ զականջս և զմիտս ձեր ընդդէմ ամենայն այնպիսեաց. և վառեալ հոգւով արութեան զդէմ կալջիք ամենայն հնարից նոցա և աւազակութեանց, և ըստ արժանի հաւատարմութեանց տպաւորելոց 'ի հոգիս ձեր, յարմարեսջիք զա̄մ գործս ձեր թէ պատերազմելով ը̅ նոսա և ը̅ հեռւոյս նոցին անձամբ անձին՝ կի̄ միաւորուք ը̅ գունդս զօրաց Ռուսաց, և թէ այլ ա̄մ որպիսի և լցէք հարկաւորօքն հաւատարմութեանց ըստ պահանջելոյ այսմ ժամանակի աւազակաբար յարձակմանց նց̄, առանց խնայելոյ երբեմն նաև զվերջին իսկ կաթիլ արեան ձերոյ. հաւատացէք եղեալ՝ թէ սքանչելի փրկութէ Ն.Յ̄ ձեզ՝ առանց մեծ ժխտաւուց ձերոց. և քաջութի և զօրութէ ձեր 'ի կեանս ձեր և յազգս յաւիտենից հիւսեսցեն ձեզ շնորհօք Ն.Յ̄ և օծելոյ նորա Ինքնակալի ա̄մ Ռուսաց՝ պանծալի պսակ անձանց, և առ հասարակ հայրենի ազգի Հայոց.

Ի 28. Յուլիսի. 1826.
Ի Տփխիս.

Արքեպիսկոպոս Հայոց
Առաջնորդ Ներսէս.

95

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ԲՈՒԿ. Գրքեր Նո 1347 10 Ռ. – կ
ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0025330